

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Մամլո հաղորդագրություն

25 ապրիլի, 2014, Երևան

### **Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ աշխարհում բարելավել է իր դիրքը 17 տեղով՝ զբաղեցնելով 65-րդ հորիզոնականը**

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՅՏՖ) Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպություն Հայաստանում, ներկայացնում է ՅՏՖ կողմից հրապարակվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց 2014»-ի հիմնական արդյունքները:

Չեկույցի հիմքում ընկած է **ցանցային պատրաստվածության համաթիվը**, որը ցույց է տալիս երկրների՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, ինչն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը:

Այս տարի զեկույցը գնահատել է աշխարհում 148 տնտեսությունների ՏՏ մրցունակությունը՝ ընդգրկված երկրների քանակն ավելացնելով չորսով:

ՅՏՖ-ի գնահատականներով Ֆինլանդիան, Սինգապուրը և Շվեդիան շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել ցանցային պատրաստվածության վարկանիշով

**Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցիչով աշխարհում 65-րդն է 148 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատությամբ 17 տեղով իր դիրքի բարելավման և ընդհանուր միավորի 5%-անոց աճի շնորհիվ:**

Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել համաթվի բոլոր բաղադրիչների գծով: Էական բարելավում է գրանցվել հատկապես Պատրաստվածության և Ազդեցության բաղադրիչներում (համապատասխանաբար +22 և +16 կետով): Վերջինիս մեծապես նպաստել է ՏՏ ոլորտում ենթակառուցվածքի զարգացումը և ՏՏ-ի ունեցած տնտեսական և սոցիալական ընդլայնված ազդեցությունը: Ընկերությունների ղեկավարների կարծիքով՝ Հայաստանում ՏՏ-ն ունի բավականին մեծ և աճող ազդեցություն նոր ապրանքների ու ծառայությունների մշակման, ինչպես նաև նոր կազմակերպական մոդելների ներդրման բնագավառում: Չգալի առաջընթաց է նկատվել նաև կառավարության կողմից ՏՏ օգտագործման բաղադրիչով:

		Վարկանիշ	Միավոր	Դիրքի փոփոխությունը, կետ
<b>1. Միջավայրի բաղադրիչ</b>		<b>83</b>	<b>3.8</b>	<b>7</b>
Յենասյուն 1.	Քաղաքական և կարգավորիչ միջավայր	104	3.3	0
Յենասյուն 2.	Գործարար և նորարարական միջավայր	67	4.3	5
<b>2. Պատրաստվածության բաղադրիչ</b>		<b>51</b>	<b>5.1</b>	<b>22</b>
Յենասյուն 3.	Ենթակառուցվածք և թվային բովանդակություն	53	4.6	19
Յենասյուն 4.	Մատչելիություն	63	5.4	14
Յենասյուն 5.	Յմտություններ	47	5.4	12
<b>3. Օգտագործման բաղադրիչ</b>		<b>73</b>	<b>3.7</b>	<b>6</b>
Յենասյուն 6.	Անհատների օգտագործում	74	3.5	3
Յենասյուն 7.	Բիզնեսի օգտագործում	82	3.5	7
Յենասյուն 8.	Պետական օգտագործում	76	4.0	2
<b>4. Ազդեցության բաղադրիչ</b>		<b>67</b>	<b>3.5</b>	<b>16</b>
Յենասյուն 9.	Տնտեսական ազդեցություն	47	3.5	22
Յենասյուն 10.	Սոցիալական ազդեցություն	80	3.6	10

ԱՊՅ երկրների և Վրաստանի շրջանում Հայաստանը ցանցային պատրաստվածության համաթվով գրանցել է ամենամեծ աճը՝ թեև ներկայիս դիրքով չարունակում է զիջել երկրների մեծ մասին:

<b>Ցանցային պատրաստվածություն</b>		
	2014 վարկանիշ	Փոփոխ. +/-
<b>Ղազախստան</b>	38	5
<b>Ադրբեջան</b>	49	7
<b>Ռուսաստան</b>	50	4
<b>Վրաստան</b>	60	5
<b>Հայաստան</b>	<b>65</b>	<b>17</b>
<b>Մոլդովա</b>	77	0
<b>Ուկրաինա</b>	81	-8
<b>Դրոզդստան</b>	118	0

ՀՏԳ-ի գնահատականներով Հայաստանի ՏՀՏ ոլորտում առավել ուշագրավ առավելություններն ու թերություններն են.

<b>Ամենաեական առավելությունները</b>	<b>Տեղ</b>	<b>Ամենաեական թերությունները</b>	<b>Տեղ</b>
Ձեռնարկության հիմնման գործընթացներ, քանակ	<b>3</b>	Պայմանագրերի կիրարկում, գործընթացների թիվ	<b>142</b>
Ձեռնարկության հիմնման տևողություն, օր	<b>9</b>	Էլ.- մասնակցության ցուցիչ	<b>127</b>
Չափահաս բնակչության գրագիտության մակարդակ, %	<b>11</b>	Կառավարման դպրոցների որակը	<b>120</b>
ՏՀՏ օգտագործումը և կառավարության արդյունավետությունը	<b>24</b>	Անձնակազմի վերապատրաստում	<b>114</b>

SՅՏ ազդեցությունը նոր կազմակերպական մոդելների ներդրման վրա	<b>36</b>	Ինտերնետ և հեռախոսային ծառայությունների ոլորտում մրցակցություն	<b>113</b>
SՅՏ ոլորտը կարգավորող օրենքներ	<b>42</b>	Բարձր տեխնոլոգիաների պետական գնումներ	<b>111</b>

Երկրի հիմնական ուժեղ կողմերից են ձեռնարկությունների գրանցման հետ կապված հիմնական գործընթացների դյուրինությունը, ինչն ապահովում է ոլորտի զարգացման ենթակառուցվածքային գնահատականների բարձրացումը: Բավականին դրական են գնահատվում նաև ոլորտի օրենսդրական դաշտը, ինչպես նաև SՅՏ ազդեցությունը կառավարության արդյունավետության բարձրացման ու բիզնես ոլորտում նոր մոդելների ներդրման վրա:

Ամենախնդրահարույց ոլորտներից են ոլորտում գնահատվող թերի մրցակցությունը, անձնակազմի վերապատրաստման ցածր աստիճանը և բիզնես դպրոցների ցածր որակը, որոնք ազդում են ընդհանուր առմամբ տնտեսության աշխատուժի պատրաստվածության վրա: Պայմանագրերի կիրարկման դժվարությունը և SՅՏ ունեցած բավականին ցածր սոցիալական ազդեցությունը, որը մասնավորապես արտահայտվում է Էլեկտրոնային ցածր մասնակցությամբ, ոլորտի լուրջ խնդիրներից են:

**«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն**

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0010, Մելիք Աղամյան 2/1  
 Հեռ.՝ +37410 546434  
 Էլ-փոստ՝ [info@ev.am](mailto:info@ev.am),  
[www.ev.am](http://www.ev.am), [www.evconsulting.com](http://www.evconsulting.com)